ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 230 – Ա

12 հունիսի 2020թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 40-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու զարգացման նախարարի 2017 թվականի մարտի 13-ի N 03 - Ն հրամանի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գործունեության ընթացքում առաջացած փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու, մշտական պահպանության կամ ոչնչացման համար դրանց ընտրությունը կազմակերպելու և «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Գեղարքունիքի մարզային մասնաճյուղին հանձնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին կից ստեղծել փորձագիտական հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ գործունեության ընթացքում ղեկավարվել «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 397-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու զարգացման նախարարի 2017 թվականի մարտի 13-ի N 03 -Ն հրամանի և այլ իրավական ակտերի պահանջներով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 40-Ա կարգադրությունը:

12.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի հունիսի 12-ի
N 230-Ա որոշման

ԿԱԶՄ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Խլղաթյան Սևակ	- մարզպետարանի գլխավոր քարտուղար, **նախագահ**
Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Զազյան Կարեն	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի առողջապահության և և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար
Հարությունյան Վանիկ	- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Ղուկասյան Վերգինե	- մարզպետարանի քարտուղարության պետ
Եդոյան Արմեն	- «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի վարիչ /համաձայնությամբ/
Խաչատրյան Արամ	- մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Մնացականյան Վարդանուշ	- մարզպետարանի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ
Գյարզոյան Մարինե	- մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ղուրշուդյան Մարատ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ
Մանուկյան Սիմոն	- մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, **քարտուղար**
Բաղեյան Արթուր	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Չիչակյան Ռուզաննա	- մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի մասնագետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

12.06.2020

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ